

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Տարւոյս փետրուարի «Հանդիսին» հետ առաջուեցաւ Յ. Բաժանորդաց Եայտարարութիւն մը, որ հրաւեր էր կարգարար ազգայնոց մասնակցել «Վիննայի Միտիթարեան Միաբանութեան Մատենադարանին շեռագրաց ցուցակին», տպագրութեան: Ըստ ան էր Եայտարարութեան մէջ թէ գիրքը պիտի ըլլայ գրեթէ «1000 էջ, լուսատիպ եւ գունանոր տախտակներով, սկիզբն գերմաներէն յաւելուածով», Նոյնպէս կը ծանուցուէր թէ «Խաբաքանչիւր բաժանորդին օրինակները Նոյնմիքերին կ'աղարկուի ուղղակի»:

Բայց տպագրութեան ընթացքին մէջ գրեթէ 100 ի չափ Նոր ձեռագիրներ եկան երկաթիւութեան ծաւալն ստուարացնելու, եւ գործը փոխանակ 125 մեծադիր թերթէ բաղկանալու (իր 1000 էջ), պիտի բաղկանայ գրեթէ 170—175 թերթէ (1500 էջերէ) եւ 7 տախտակէ, երկուքը գունանոր: Արդէն 135^{րդ} թերթը տպագրուած պատրաստ է: Այս ակամայ՝ բայց բաժանորդաց համար անշուշտ ուրախիլ յապաղում, կը ստիպէ զմեզ մինչեւ գալ տարւոյ սկիզբները յետաձգել գործոյն հրատարակութիւնը:

Հրատարակութեան մասնակցողաց ցուցակին վերջին մասը Նոյնի «Հանդիսին» մէջ տպուելէն ետեւ, հասան նաեւ հետեւեալք, որով Բաժանորդագրութիւնն այսուհետեւ բոլորովին կը փակուի:

86. Փրոֆ. Լ. Հիւբման

87—90. Պր. Յովակիմ Զամալպաշեան

91. Պր. Գէորգ Տէր-Աղաքեան

92. Պր. Համբարձում Առաքելեան:

Այս մասնակցողաց անուանքը գործոյն հրատարակութեան վրայ չեն տպագրուած, վասն զի այն թերթն տպուած էր արդէն երբ ասոնք մեզի հասան:

Յիշեալ ձեռագրաց ցուցակին, որ կիսով չափ ստուարացաւ այժմ, այսուհետեւ կ'արժէ Փր. 62.— = րբ. 23.— = Փլ. 30.— = մարք 50.—:

ԽՄԲ. «ՀԱՆԴԻՍԻՆ»

ՅԱՉԱՔԱՅԱՆ ՏԵՄՈՒԹԱՆ

Վիեննա, 30. Նոյեմբեր 1895.

Ներուպայի ամէն ղարմաններն ալ գործունեայ շարժման մէջ էին այս ամիս տեղի ունեցած ամենածանօթ ինսիքներու պատճառաւ: Դարձիմներու նման էին թորւանները, որոնց մէջ շահադէտներու «Երկայն մատերը», քանի մը միլիոններ ալ սահնցուցին իրենց անյատակ զրպանները, եւ այնպիսի դրութեան հասցուցին հրապարակը, որ կանուխ կամ անագան շատ մը վաճառատանց եւ դրամատանց սնանկութեան պատճառաւ եղան: Այս էր ներուպայի «Զարեհար միջամտութեան», առաջին պտուղը: Եթէ առաջին «պտուղն», նիւթական էր, որ շատերուն համար ի կորուստ մատնուեցաւ, եկրորդն էր կենսական, որ անփոխարինելի է, եւ ազգաց պատմութեան մէջ անջնջելի նշանադրոշմ մը պիտի դրոշմէ երուպական քաղաքակրթութեան ծակտիւն վրայ . . . :

Եթէ վերոյիշեալ մեծ դէպքին վերաբերեալ հետազոտները, քաղաքական տեսութիւնները, նախօրոյումներն ի քաց առնունք, շատ քիչ քան կը մնայ այս ամիս երուպական լրագրաց մէջ, եւ սակայն հարկ է համառօտակի յիշել ուրիշ յիշատակաց արժանի դէպքերը:

Սպանիական զէնքերը փթացած կը թուին, եւ կամ Արէս երեսը դարձուցած է անոնցմէ: Մեր Սեպտեմբերի քաղաքական տեսութեան մէջ զուշակածը իրականութեան կը փոխուի: Բուքարէս յառաջադէմ կ'ըլլան եւ յաշողութիւն կը գտնեն պատերազմի դաշտին վրայ: Եւ թշուառ Սպանիա կը ստիպուի այս օրերս վերստին 20 հազար զինուոր դրել, որով մինչեւ հիմայ առաքուած զօրաց թիւն է 120.000, եւ եթէ «Զարեհէ», լրերու հաւատանք, շուտով պիտի դադրին կղզույն խռովութիւններն եւ խաղաղութիւնը պիտի հաստատուի: Ընթերցող հասարակութիւնը վարժեցաւ մանաւանդ այս վերջին ամիսները, վերապահութեամբ ընդունիլ, եւ կամ ընտա հաւատք չընծայել, պաշտօնական ծանուցմանց, եւ այս՝ ոչ